ԿԱՐՃԻՔ

Մարիամ Ռոմանի Բաղդասարյանի «Առանձին դաժանությամբ կատարված սպանությունների քրեաիրավական բնութագիրը և որակման հիմնախնդիրները» վերնագրությամբ, ԺԲ.00.05 «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության վերաբերյալ

Սպանություններն ընդհանրապես, իսկ առանձին դաժանությամբ սպանությունները հատկապես, ամենանողկալի հանցագործություններից են, ուստի դրանց դեմ պայքարը, այդ թվում, քրեաիրավական միջոցներով ժամանակի հրամայականն է: Այդ մասին շատ ճիշտ գրում է հեղինակը:

Պետք է նշել, որ հեղինակին հաջողվել է բացահայտել թեմայի բովանդակությունը:

Ներածության մեջ հեղինակը հիմնավորում է թեմայի արդիականությունը հիմնականում դա, շատ ճիշտ, կապելով «առանձին դաժանություն» օրենսդրական հասկացության բացակայության և դրա հետևանքով իրավակիրառ պրակտիկայում այդ հասկացության հաճախ սխալ և ոչ միանշանակ ըմբռնման հետ: Պատահական չէ, որ հեղինակն առաջարկում է գործող օրենսգրքի երրորդ հոդվածում տալ առանձին դաժանության հասկացությունը:

Առաջին գլխում «Առանձին դաժանությամբ կատարված սպանությունների պատմահրավական ասպեկտներ» հեղինակը մանրամասն քննարկում է «առանձին դաժանություն» հասկացության զարգացումը տարբեր երկրների քրեական օրենսդրություններում և տեսության մեջ, ինչպես նաև «առանձին դաժանությունը» որպես գնահատողական կատեգորիայի բովանդակությունը: Հեղինակը, մեր կարծիքով, իրավացիորեն պնդում է, որ առանձին դաժանությունը վկայող փաստական հանգամանքների տակ պետք է հասկանալ հանցավոր արարքի կատարման առանձին դաժան եղանակի և (կամ) այն վկայող հանգամանքների առկայությունը. հանցավորի կողմից տուժողին կյանքից զրկելու եղանակի և (կամ) այն վկայող հանգամանքների առանձին դաժան բնույթը գիտակցելը. հանրության համար դրա վտանգավոր հետևանքները կամ այդ հետևանքների առաջացման հնարավորությունը կամ անխուսափելիությունը, ինչպես նաև տուժողի մահը հենց այդ եղանակով ցանկանալը կամ գիտակցաբար թույլ տալը:

Այնուհետև հեղինակը տալիս է առանձին դաժանության իր յուրօրինակ հասկացությունը. հետևաբար, գրում է հեղինակը, սպանության դեպքում դրսևորվող առանձին դաժանությունը դաժանության այն չափաքանակն է, որը գտնվում է քրեական օրենսգրքով սահմանված սպանության հիմնական հանցակազմով սահմանված

դաժանության հասկացության շրջանակից դուրս և հանդես է գալիս որպես դաժանության առանձին, հավելյալ, լրացուցիչ, ինքնուրույն դրսևորում, որը տուժողի կամ նրա մերձավորի նկատմամբ դրսևորած գործողության կամ անգործության արդյունքում առաջ է բերում հանցավորի գիտակցությամբ ընդգրկված սպանության հիմնական հանցակազմով նախատեսված մահվան հետևանքի առաջացման համար ոչ պարտադիր, դրա շրջանակից դուրս, ուժեղ, ծանր, ֆիզիկական և (կամ) հոգեկան տառապանք:

Հեղինակը գտնում է նաև, որ դիակը ինքնանպատակ անդամահատելը առանձին դաժանության վկայություն է:

Մենք նույնպես այն կարծիքին ենք, որ դիակը ինքնանպատակ անդամահատելը առանձին դաժանության վկայություն է:

Այնուհետև հեղինակը մանրամասն քննարկում է առանձին դաժանության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները:

Խոսելով առանձին դաժանության օբյեկտիվ հատկանիշների մասին, հեղինակն առանձնացնում է այնպիսիք, ինչպիսիք են սպանության եղանակը, տեղը, ժամանակը, գործիքները, իրավիճակը, իրադրությունը, հանգամանքները, զոհի վարքագիծը:Խոսելով առանձին դաժանության սուբյեկտիվ հատկանիշների մասին, , հեղինակն առանձնացնում է այնպիսիք, ինչպիսիք են սպանության դիտավորությունը, դրա տեսակը, հանցանքի շարժառիթը, նպատակը:

Աշխատանքի կառուցվածքը հիմնավոր է և թույլ է տվել հեղինակին ճշգրիտ տրամաբանությամբ իրականացնելու հետազոտությունը:

Օգտագործվել է հարուստ գրականություն և իրավակիրառ պրակտիկա:

Միևնույն ժամանակ աշխատանքի կապակցությամբ ունենք որոշ նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին

1. «Առանձին դաժանությամբ կատարված սպանությունների պատմահիրավական ասպեկտները» առաջին գլխում, ինչպես արդեն նշել ենք, հեղինակը մանրամասն քննարկում է «առանձին դաժանություն» հասկացության զարգացումը տարբեր երկրների քրեական օրենսդրություններում և տեսության մեջ, ինչպես նաև «առանձին դաժանությունը» որպես գնահատողական կատեգորիայի բովանդակությունը և «առանձին դաժանություն» հասկացությունը: Մեր կարծիքով ճիշտ կլիներ վերջին երկու հարցը քննարկել առանձին գլխով:

2. Հեղինակն առաջարկում է դիակն անարգանքի ենթարկելու հանցակազմի վերնագիրը և դիսպոզիցիան փոխել և դարձնել մահացածի ապօրինի արտաշիրիմելը, նրա հագուստը կամ նրա վրա գտնվող այլ իրերը վերցնելը կամ մահացածի հիշատակն

այլ կերպ անարգելը: Այնուհետև հեղինակը կարծում է, որ դա ավելին է, քան զուտ բառերի բարեհնչ դարձնելը: էջ 105, ինչումն է այդ ավելին, այդպես էլ չի երևում:

3. Խոսելով մերձավորի ներկայությամբ սպանության մասին, հեղինակը նկատում է, որ մերձավորների շրջանակը չի սահմանափակվում մերձավոր ազգականների շրջանակով:

Տպավորություն է ստեղծվում, որ հեղինակը ծանոթ չէ գործող օրենսգրքի 3-րդ հոդվածին, որտեղ մերձավոր ազգական և մերձավոր հասկացությունները սահմանազատված են: էջ 132

4. Մեր կարծիքով առանձին դաժանությամբ կատարված սպանությունների խորքային շարժառիթները հենական այդքան էլ խորությամբ չի բացահայտել: Իրենց բովանդակությամբ և դրսևորման ձևով շարժառիթները կարող են լինել տարբեր վրեժը, խանդը, շահը, նախանձը, ատելությունը, վախը, խուլիգանական դրդումները, անձնական շահագրգռվածությունը և այլն: Սրանք մակերեսային շարժառիթներ են: Կրիմինոլոգների և հոգեբանների մեծ մասը ներկայումս գտնում են, որ հանցանքների հիմնական մասը կատարվում են սոցիալական կամ կենսաբանական ստատուսը պաշտպանելու համար: Առանձին դաժանությամբ կատարված սպանությունների խոր շարժառիթներ կարող են լինել տուժողին մաքրազարդելու ցանկությունը, ուժեղ ֆրուստրացիան: էջ 168

5. Համաձայն չենք հեղինակի այն պնդման հետ, որ տուժողի արարքի հակաբարոյականությունը պետք է նորից ընդգրկվի հոգեկան խիստ հուզմունքի վիճակում սպանության մեջ: Արարքի հակաբարոյականությունը միանշանակ չի ընկալվում, ուստի իրավական անորոշության է հանգեցնում: էջ 179-180:

Այս նկատառումները մեր սուբյեկտիվ դիրքորոշումն են, բխում են աշխատանքը ավելի կատարյալ տեսնելու ցանկությունից և չեն ստվերում աշխատանքի որակն ու արժանիքները:

Հեղինակը կատարել է ծավալուն աշխատանք, քննարկել է առանձին դաժանությամբ կատարված սպանություններին վերաբերող բոլոր խնդրահարույց հարցերը:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված 9-ը գիտական հոդվածներում:

Այսպիսով Մարիամ Ռոմանի Բաղդասարյանի «Առանձին դաժանությամբ կատարված սպանությունների քրեաիրավական բնութագիրը և որակման հիմնախնդիրները» վերտառությամբ, ԺԲ.00.05 «Քրեական իրավունք և

կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք>> մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսությունը պատշաճ գիտական մակարդակով գրված, տեսական ու գործնական զգալի նշանակություն ունեցող աշխատանք է, որը լիովին համապատասխանում է ՀՀ Կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով սահմանված ատենախոսությանը ներկայավող պահանջներին և Մարիամ Ռոմանի Բաղդասարյանն արժանի է իր կողմից հայցվող ԺԲ.00. 05 <<Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք>> մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

պաշտոնական ընդդիմախոս
իրավ. գիտ. դոկտոր պրոֆեսոր Ա. ԳԱԲՐՈՒՉՅԱՆ

պաշտոնական ընդդիմախոս իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Գաբրուչյանի ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ Հ. ԽԱՉԻԿՅԱՆ
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր